

«ՀԱՅԵՐԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿԻՆՈՅՈՒՄ»

Հեղինակ՝ Արծվի Բախչինյան

Երիտասարդ հայագետ՝ բանասեր, պատմաբան, մշակութաբան, բնասիրական գիտությունների թեկնածու Արծվի Բախչինյանի բազմակողմանի խորությամբ և ընդգրկում ունեցող հանրագիտարանային և հետաքրքրաշարժ աշխատությունները (Հայաստանում և արտասահմանում լույս տեսած շուրջ մեկ տասնյակ գրքեր և հարյուրավոր հոդվածներ) միտված են պատմափաստագրորեն լուսաբանելու հայության մշակակալից և գործուն նպաստը համաշխարհային քաղաքակրթությանը՝ նրա զարգացման բոլոր էտապներում և հանգամանքներում:

Ա. Բախչինյանը կազմել է «Ծագումով հայ են» (Եր., 1993) և «Հայագի գործիչները. հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը» (Եր., 2002) կենսագրական բառարանները: Հեղինակ է նաև «Հայ-շվեդական առնչություններ» (Ուփսալա, 1997), «Հայաստան-Սկանդինավիա. պատմամշակութային առնչություններ» (Եր., 2003), «Նապոլեոն Բոնապարտը և հայերը» (Եր., 2003), «Ռուբեն Մամուլյան. Կյանքը և ստեղծագործությունը» (անտիպ) ուսումնասիրությունների: Նրա աշխատասիրությամբ լույս է տեսել հայ մշակութային և հասարակական գործիչ, իշխանուհի Մարիամ Թումանյանի (1870-1947 թթ.) «Իմ համառոտ կենսագրությունը և իմ հիշողությունները» (Եր., 2003) գիրքը: Ա. Բախչինյանը հեղինակել է «Հայ Սփյուռք Հանրագիտարանի» (Եր., 2003) Սկանդինավյան երկրների, ինչպես նաև տարբեր երկրներում հայ սփյուռքի պատմամշակութային կյանքին վերաբերող հոդվածները:

2004 թ. լույս տեսած «Հայերը համաշխարհային կինոյում» հանրագիտարանային և կոթողային աննախադեպ աշխատությունը կարելի է ասել, որ հեղինակի կյանքի գիրքն է, քանի որ այն նրա 15 տարիների մանրակրկիտ, նպատակասլաց և անձանձիր համբերությամբ հավաքված ու ամբարված հարուստ փաստագրական տվյալների կինոարվեստին հատուկ ճոխ և փայլուն ներկայացումն է ընթերցողին:

Երեսանի Գրականության և արվեստի թանգարանի հրատարակությամբ լույս տեսած շուրջ 700 էջանոց այս ստվար հատորում ներկայացված են համաշխարհային կինոյին ընդհանուր առմամբ իրենց մասնակցությունը բերած գրեթե 50 երկրների շուրջ 2200 հայագիների վերաբերյալ առավել հանգամանակից տեղեկություններ, կինոարտադրության այս կամ այն ոլորտի

զարգացմանը նրանց բերած նպաստի, նրանց կինոգործունեության ու կենսագրության մասին պատմող հարուստ ու բացառիկ փաստեր, որոնք հեղինակը կարողացել է քաղել սփյուռքահայ եւ օտար ծովածավալ մամուլից, բազմալեզու կինոտեղեկատուներից, առանձին երկրների ֆիլմագրություններից, կինոհանրագիտարաններից, մասնագիտական գրականությունից, բազմաթիվ ազգային տարեցույցներից, Երեւանի Գրականության եւ արվեստի թանգարանի, ինչպես նաեւ Հայաստանի Ազգային արխիվի ֆոնդերից, համացանցի հարստագույն շտեմարաններից, անձնական նամակագրություններից, հանդիպումներից եւ այլն:

Գրքի նախաբանում երիտասարդ հետազոտողն անդրադարձել է նյութի ուսումնասիրման պատմությանը (էջ 10-13):

Ներածության մեջ հեղինակը հանգամանորեն ներկայացնում է համաշխարհային կինոարդյունաբերության առանձնահատկությունները՝ նշելով. «Կինոյի՝ ոչ սոսկ արվեստ, այլեւ որպես արդյունաբերություն լինելու իրողությունը ենթադրում է, որ այն պետք է զարգացում ապրի հաստատուն հիմքի վրա, տվյալ պարագայում՝ պետական կառույցում, ինչը անհնար է աշխարհասփյուռ հայության համար: Այլապես արդյունքում լինում են սոսկ պատահական փորձեր, որոնք, որպես կանոն, այնքան թույլ են, որ ասպարեզը գրեթե բաց է մնում» (էջ 15): Այնպես որ, ի տարբերություն արվեստի մյուս բնագավառների, երբ «տարբեր հայ եւ հայազգի գործիչներ, ստեղծագործելով հանդերձ օտար միջավայրում, իրենց արվեստով հաճախ միաժամանակ պատկանում են նաեւ հայ մշակույթին: Կինո արվեստի բնագավառը մի փոքր այլ է, քանի որ տարբեր երկրների կինոմատոգրաֆին իրենց մասնակցությունը բերած հայերն իրենց ստեղծագործությանը չեն առնչվում հայ կինոյին: Նրանցից շատերը, որքան էլ կապ չունեն հայ արվեստի եւ իրականության հետ, այնուամենայնիվ, իրենց գոյությամբ մաս են կազմում հայ ժողովրդի՝ նրա գենոֆոնդի եւ որոշ չափով՝ նաեւ պատմության: Մինչդեռ հայ արվեստին նրանք կան բնավ չեն առնչվում, կան կարող են առնչվել որոշ վերապահումով՝ այնքանով, որքանով նրանց ստեղծագործությունը կարող է ունենալ հայ արվեստին բնորոշ ինչ-ինչ տարրեր (մտածողություն, ընկալում, գեղագիտություն, հոգեբանություն, ոճ, ժանրային եւ թեմատիկ նախապատվություններ)» (էջ 14):

Աշխատության մեջ Ա. Բախչինյանն առանձին գլխով ներկայացնելով «Հայ կինոյի նախապատմությունը» գաղթօջախներում (աշխարհում հայկական առաջին՝ 5 մասից բաղկացած հայոց պատմության եւ մշակույթի թեմաներով շարժապատկերը նկարահանել է 1912 թ. Եգիպտոսում «Յիշատակարան» կոչվող գրքույկների հրատարակիչ, եգիպտահայ գրավաճառ Վահան Ջարդարյանը) եւ Հայաստանում (1924 թ. Երեւանում նկարահանվել է Հայկինոյի «Խորհրդային Հայաստան» հայկական առաջին շարժանկարը)՝ միաժամանակ կարեւորում է «ոչ ազգային միջավայրում գործած, օտար քուրաներին կրակ տված» եւ իրենց ծնած ժողովրդի ազգային մշակույթի հետ կապ չունեցող հայրենակիցներին

հայտնաբերելը, ուսումնասիրելն ու ներկայացնելը, մանավանդ որ այլ ժողովուրդներ (ռուսներ, հրեաներ եւ այլք) արդեն իսկ ունեն համաշխարհային կինոյում իրենց ազգի ներկայացուցիչների նպաստը լուսաբանող հրատարակություններ (էջ 20):

Այս առիթով Ա. Բախչինյանը մանրամասնում է. «Հիշենք, որ դարեր շարունակ հայ ժողովրդի մի մասն ապրում է իր հայրենիքից դուրս, եւ հաճախ իր հայրենի երկիրը զուրկ է եղել գործունեության մի շարք ոլորտներից, ուստի եւ շատ հայեր գործել են օտար միջավայրում, էլ չենք ասում արտասահմանում ծնվածների մասին, որոնց համար Հայաստանն արդեն սոսկ նախնիների հայրենիք է: Սակայն նրանք անուղղակիորեն արժեքավորում են նաեւ իրենց ծնած ժողովրդին, ցույց տալիս ցեղի հնարավորությունները» (էջ 21): Այս տեսակետից բնութագրական եւ հիմնականում նաեւ ընդհանրական է իր ազգային արմատներին վերադարձող ամերիկյան կինոյի եւ էստրադայի երեւելի աստղ ամերիկածին Շերի (Շերիլին Սարգսյան) օտար մամուլում տպագրված խոսքերը 1993 թ. Հայաստան այցելելուց առաջ եւ հետո. «Ես հպարտ եմ այս երկրով (իմա՝ ԱՄՆ Ք. Ա.), այո, ես ամերիկացի եմ, սակայն երբեք չեմ կորցրել հայի իմ ինքնությունը» («Հորիզոն», Սոնրեալ, 1.07.1985) (էջ 162):

Իսկ ամերիկյան Time շաբաթաթերթի 1997 թ. համակարգչային հարցախույզի արդյունքում 149 հազար ձայնով «Դարի արվեստագետ» ճանաչված (ի դեպ երկրորդ տեղում էր էլվիս Փրեսլին) երգիչ-երգահան, դերասան, մեծանուն հայորդի Շարլ Ազնավուրը, որին ժամանակի ֆրանսիական մամուլը բնութագրել է «Ֆրանսիան ազնավուրացված է» խոսքերով, հետեւյալ կերպ է արտահայտվել իր ազգային պատկանելության մասին. «Ես հարյուր տոկոսով հայ եմ եւ հարյուր տոկոսով ֆրանսիացի: Շատ կապված եմ իմ արմատներին, ամբողջականորեն հայ եմ իմ կենցաղով ու սովորույթներով եւ ամբողջականորեն ֆրանսիացի՝ իմ արվեստի մեջ: Ու երկվություն չկա այդ երկու հանգամանքների միջեւ»:

Ա. Բախչինյանի աշխատության հաջորդ բաժիններում համակարգված ներկայացված են Ամերիկայի Միացյալ Նահանգների, Կանադայի, Եվրոպայի, Թուրքիայի, Իրանի, արաբական, ասիական, Լատինական Ամերիկայի երկրների, Ավստրալիայի եւ Նոր Զելանդիայի կինոարդյունաբերությանն իրենց նպաստը բերած հայազգիների վերաբերյալ հարուստ եւ հնարավորինս մանրամասն տեղեկություններ:

Հայկական ծագումով երեւելի գործիչների մեծամասնությունն ապրում եւ աշխատում է ԱՄՆ-ում եւ Ֆրանսիայում, ուստի եւ ամենից ծավալունն այդ երկրների բաժիններն են: Հեղինակը հմուտ եւ մատչելի շարադրանքով ներկայացնում է առանձին-առանձին նրանցից յուրաքանչյուրի կյանքի եւ գործունեության պատմությունը, անձնական մտորումները, ապրումներն ու ակկուլտուրացիոն գործընթացներն ազգային միջավայրից դուրս: Դրանով իսկ

ընդհանուր պատկերացում է տրվում տվյալ երկրի հայ համայնքի կյանքի առանձին հարցերին:

Յուրաքանչյուր երկրի ներքո խմբավորված ներկայացված են կինոարդյունաբերության գրեթե բոլոր ոլորտները ներառող հայազգիները.

- *Բեմադրիչներ [Ռուբեն Մամուլյան, Մայքլ Հակոբյան, Անրի Վեռնոյ, Ատոմ Եղոյան եւ այլք]:*

- *Դերասաններ (ընդ որում՝ կինոյի, թատրոնի եւ հեռատեսիլի, ինչպես նաեւ՝ երաժիշտներ, պարողներ, մարզիկներ, էրոտիկ աստղեր եւ այլն) [Ֆլորա Զաբել, Ակին Թամիրով, Առլեն Ֆրենսիս, Մայք Քոնրոգ, Ադրինե Բարբյո, Շեր, Լյուսի Սարոյան, Էրիկ Պողոսյան, Հյուզ դը Բագրատիդ, Աշո Շահխաթունի, Պիտոններ, Շարլ Ազնավուր, Սիլվի Վարդան, Արասի Բալաբանյան եւ այլք]:*

- *Այլ բնագավառներ՝ գրողներ, սցենարիստներ, օպերատորներ, կինոարդյունաբերողներ, արտադրական, հնչյունավորող-ձայնագրող անձնակազմ, հնչյունային օպերատորներ, երգահաններ, գեղարվեստական (զգեստաստեղծներ, վարսահարդարներ, դիմահարդարներ, ձեւավորողներ, նկարիչներ) անձնակազմ եւ այլ մասնագիտություններ [Մայքլ Առլեն, Ուլյան Սարոյան, Քրոք Քրոքոյան, Վահե Քաչա, Ժորժ Կառվարենց, Սիշել Լեգրան եւ այլք]:*

Սույն հատորն ունի նաեւ հետաքրքրաշարժ փաստերով հարուստ 3 հավելված բաժին: Առաջին հավելված բաժնում ներկայացված են «Հայամուն կինոգործիչները»՝ այսինքն, նրանք, որոնք ունեցել են հայազգի ամուսիններ (Յանի Սեւակ՝ Ռուբեն Սեւակի այրին, Էվելին Ազնավուր՝ Շառլ Ազնավուրի երկրորդ կինը, Ջանի Սորանդի՝ դերասանուհի Լաուրա Էֆրիկյանի երբեմնի ամուսինը, Ժան-Կլոդ Վան Դամ՝ դերասանուհի Սինթիա Դերդերյանի կարճատեւ ամուսինը եւ այլք):

Երկրորդ Հավելված բաժնում ներկայացված են «Հեռավոր եւ հավանական հայկական ծագում ունեցող դերասանները» [Էլեոնորա Դուզե, Վիվյեն Լի, Փիթըր Ուստինով, Իզաբել Կարայան եւ այլք]:

Երրորդ Հավելված «Հայապատում կինոնկարներ» բաժինը ներառում է՝

ա. Հայ եւ օտար կինոբեմադրիչների կողմից նկարահանված «Հայկական թեմայով կինոնկարներ» [«Հոգիների աճուրդ», ԱՄՆ, 1918-1919, բեմադրիչ՝ Օսքար Ափֆել; «Հայերը Ամերիկայում», ԱՄՆ, 1959, բեմադրիչ՝ Ավետիս Տերունյան; «Արարատի վերադարձը», Շվեդիա, 1987-1988, բեմադրիչ՝ Փեյո Յոլմքվիսթ; «Հայոց ցեղասպանությունը. Օսմանյան կայսրության հայ բնակչության բնաջնջումը», ԱՄՆ, 1991, բեմադրիչ՝ Մայքլ Հակոբյան. «Մայրիկ» եւ «588 Պարադի փողոց», Ֆրանսիա, 1991, բեմադրիչ՝ Անրի Վեռնոյ. «Ամերիկահայերը», ԱՄՆ, 2000, բեմադրիչ՝ Էնդրյու Գոլդբերգ. «Արարատ», Կանադա, 2001, բեմադրիչ՝ Ատոմ Եղոյան. «Արամ», Ֆրանսիա, 2002, բեմադրիչ՝ Ռոբեր Բեշիշյան. «Գերմանիան եւ գաղտնի ցեղասպանությունը», ԱՄՆ, 2003, բեմադրիչ՝ Մայքլ Հակոբյան եւ այլն):

բ. «Հայաստանում ֆիլմերի ծրագրեր», որտեղ նշված են նախատեսված, սակայն չնկարահանված ֆիլմերը [«Արշակ Բ», Հոլանդիա, 1929. «Դավիթ եւ Սիեր», Գերմանիա, 1929 եւ այլն]:

գ. «Հայ հերոսներով ֆիլմեր» [«Ապարտակ», «Հռոմեական կայսրության անկումը», «Նապոլեոն Բոնապարտ» եւ այլն]:

դ. «Հայկական տարրերով ֆիլմեր», երբ հնչում կամ ցուցադրվում են հայոց պատմությանը, աշխարհագրությանը, մշակույթին, առանձին հայերին վերաբերող դրվագներ [«Ամերիկա, Ամերիկա», ԱՄՆ, 1964; «Սիայն մեկ Նյու Յորք», ԱՄՆ, 1964 եւ այլն]:

ե. «Հայկական երաժշտությամբ ֆիլմեր» [«Լեբլեբիջի Հորհոր աղա», Թուրքիա, 1933, ըստ՝ Թազվոր Նայանի եւ Տիգրան Չուխաջյանի օպերետի. «Քրիստոսի չարչարանքները», ԱՄՆ, 2004, հնչում է ֆրանսահայ դուդուկահար Լեոն Սինասյանի դուդուկի երաժշտությունը եւ այլն]:

Գրքում միտումնավոր դուրս է թողնված Ռուսաստանի կինոյին հայազգի ներկայացուցիչների մասնակցության լուսաբանումը, ինչը պատճառաբանված է այն հանգամանքով, որ ԽՍՀՄ-ում հայ կինոն մաս է կազմել համընդհանուր խորհրդային կինոյին եւ՝ ընդհակառակը: «Հայաստանում եւ նրա սահմաններից դուրս բնակվող հայ ու հայազգի կինոգործիչների գործունեությունն այնքան գիրկընդխառն է եղել, որ միտք չունի առանձնացնել հայաստանցի կինոգործիչների գործունեությունը խորհրդային այլ հանրապետությունների կինոյում եւ կամ խորհրդային հայազգի կինոգործիչների գործունեությունը «Հայֆիլմում», - նշում է հեղինակը (էջ 17-18):

Հատորն ունի լուսանկարների հարուստ ընտրանի, գիտական սկզբունքով կազմված կինոգործիչների անվանացանկ, անգլերեն ընդարձակ ամփոփում:

Ցանկալի կլիմեր, որ օգտագործված աղբյուրների բաժնում եւս իրենց արտացոլումը գտնեին առանձին բաժիններում հիշատակված հարուստ գրականությունը, որով ավելի ակնառու եւ մատչելի կդառնար հատորի ողջ աղբյուրագիտական հենքը: Պետք է ենթադրել, որ պարզ վրիպակ է հայ կինոգործիչների քանակով եւ որակով ԱՄՆ-ից հետո երկրորդ տեղը զբաղեցնող Ֆրանսիան անհամեմատ ավելի երիտասարդ հայազգի կինոգործիչներ ունեցող Կանադայից հետո ներկայացնելը, մանավանդ, որ անգլերեն ամփոփման մեջ դրանք նշված են ճիշտ հաջորդականությամբ:

Արծվի Բախչինյանի այս չափազանց կարելոր եւ արժեքավոր հատորի հովանավորները եւս համաշխարհային հայկական ընդգրկում ունեն: Գլխավոր հովանավորն է Թախլանդում բնակվող հայ հոր եւ դանիացի մոր զավակ, տաղանդավոր նկարչուհի Էլիզաբեթ Դավիդյան-Ռոմմիլդը, որին եւ նվիրված է սույն աշխատասիրությունը: Գրքի տպագրությանն աջակցել են նաեւ Սիրաք հաստատությունը (ԱՄՆ), Շահե Խաչատուրյանը (Լիբանան) եւ այլք:

Աշխատությունն ընթերցվում է մեծ հետաքրքրությամբ, որի արդյունքում ոչ միայն ընդլայնվում է կինոաշխարհի մասին անհատական եւ ազգային

մտահորիզոնը, այլև աշխարհին է ներկայացվում հայն իր բազմակողմանի կարողություններով եւ տաղանդով: Ահա թե ինչու առավել քան կարելու է «Հայերը համաշխարհային կինոյուն» հատորն անգլերեն թարգմանելն ու հրատարակելը:

ՔՆԱՐԻԿ ԱՎԱԳՅԱՆ, Պատմական գիտությունների թեկնածու

University of Tehran - 70

University of Tehran, is the oldest and largest scientific, educational and research center of Iran which is called the “Mother University” and the “Symbol of higher education of the country”. This scientific center is the entering gate of Iran into the new civilization. It is also considered as one of the pioneers of the society in important scientific, cultural, political and social affairs. It is such that besides its old role in political and social changes of the country, its remarkable impact in the scientific-cultural development of the society is also undeniable. With regard to the critical mission and heavy responsibility towards the country and the exalted Iranian nation as well and also for the purpose of flourishing the potential talents of the country at the high level of human knowledge and adapting its programs with the necessities and facilities of the country, this university makes efforts to play a specific role in the construction of the country and achieve the glorious scientific –industrial dynamic and sustainable peaks.

The valuable role of the faculty members of the University in scientific and research development of the country and training the specialized and qualified forces to serve the Islamic Iran, along with the global new advancements is considerable. Enjoying the specific international scientific, cultural and political position, besides training the necessary specialized human forces in different fields and sectors , has had a considerable impact in flourishing ideas and preparing grounds for political and social moves . Also having active students’ institutions and their impact on political and social changes has been unique.

The history of the establishment of University in Iran dates back to the year 1851 and the establishment of Darolfonoon – which was founded as a result of the efforts of Mirza Taghi Khan Amir Kabir, aiming at training and teaching Iranian experts on many fields of sciences. In the year 1928, Professor Mahmood Hesabi proposed the subject of running a center which could be comprehensive or cover most of the sciences to (Ali Asghar Hekmat) the then Minister of Culture.

In January 1933, during the then cabinet meeting, the subject of Tehran's development, the beauty and glory of the buildings, beautiful mansions and palaces were discussed. On one side, the late Foroghi, who was the prime minister, and on the other side, the other ministers were admiring the advancements of the city. Riding to full gallop in admiring, many of them were excessively trying only to please the king.

In the middle of this situation, keeping an eye on the advancement of the capital, the late Ali Asghar Hekmat, being also the acting minister of the Ministry of Education stated the following words cautiously:

“ Of course, there is no doubt on the thriving state and the glory of the capital, but the only obvious deficiency is that this city has no “ university”. It is a pity that this city lags far behind other great countries of the world”. These valuable words had a profound impact on everyone and they accepted the idea. Thus having allocated an initial budget of 250,000 Tomans, the Ministry of Education was authorized to find a suitable land for the establishment of the University and take necessary measures to construct the building as soon as possible.

Immediately, Ali Asghar Hekmat in collaboration and consultation with Andre Gaudar, a French skillful architect- who was serving the Ministry of Education as an engineer, began to find a good location for the University. Following a series of searches in the abundant available buildings, gardens and lands around Tehran, Jalaliyeh garden was selected for the construction of the University of Tehran. It is worth mentioning that on those days, unlike today in which finding an appropriate land to establish a great university in Tehran is almost impossible, there were many land owner who not only did not obstinate from selling their lands, but also they were so eager to deliver their properties to these institutions which surely could bring about huge profits. For this reason some of the owners of Behjatabad lands had attracted the attention of then finance minister to buy their territories for the establishment of the University. Whereas, according to Mousier Godar, their premises [Behjatabad] were narrow and the position of those lands was in the state of flood absorbing. Indeed in no ways, they were suitable to establish the University of Tehran.

Despite this, the late Davar Rojhan emphatically insisted on purchasing Behjatabad territories. He could attract the positive views of most of the members. Finally the officials selected Behajatabad. At this time, when Ali Asghar Hekmat was witnessing the event in a mood of broken-heart and disappointed, Reza Shah arrived. Hearing the subject, in his own specific bully manner, he changed the situation and said,“ Do select Jalaliyeh garden. Behjatabad is in no way suitable. Its premise is so small and its lands are in the state of flood-absorption “. The officials had no way but to accept it.

Jalaliyeh garden was located in the north of the then Tehran between Amirabad village and the northern trench of Tehran. This beautiful garden, full of old fruitful, orchard and other kinds of trees was founded in about 1300 after Hegira in the final years of Naserol-din Shah, Qajar's government by the order of prince Jalalodoleh. At that time, a Turkish businessman owned it whose name was Haj Rahim Aqaye Etehadiyeh Tabrizi. Anyway, that businessman sold Jalaliyeh garden in lieu of 5 Rials for per meter and totally for 100,000 Tomans. Then Monsieur Godar was commissioned to determine the limits of the land, set up the rails, design and execute its constructional operations. At the same time, on February 3, 1934, in the presence of the governmental officials, the memorial plaque of University establishment was placed in a place where it is now the southern stairs of the Faculty of Medicine.

University Chancellors



Until 1942, the University of Tehran was administered by minister of Culture. Since then, the university became independent. The list of UT chancellors is as following:

- | | | |
|--------------------------|-----------------------------|---------------------------|
| 1. Dr. A. Hekmat | 11. Dr. A. Aalikhani | 21. Dr. B. Yazdi-Samadi |
| 2. Dr. E. Meraat | 12. Dr. H. Nahavandi | 22. Dr. M. Farhadi |
| 3. Dr. I. Sadigh-Alam | 13. Dr. A. Hooshang-Sharifi | 23. Eng. E. Evini |
| 4. Dr. M. Tadayyon | 14. Dr. Gh. Motamedi | 24. Dr. H. Forootan |
| 5. Dr. M. Adl | 15. Dr. A. Sheibani | 25. Dr. M. Rahimian |
| 6. Dr. A. Siasi | 16. Dr. M. Maleki | 26. Dr. G. Afrooz |
| 7. Dr. M. Eghbal | 17. Dr. H. Aarefi | 27. Dr. M. Aaref |
| 8. Dr. A. Farhad-Motamed | 18. Dr. Mehdizadeh-Shahri | 28. Dr. M. Khalili Araghi |
| 9. Dr. J. Saleh | 19. Dr. A. Gorji | 29. Dr. R. Faraji-Dana |
| 10. Dr. F. Reza | 20. Dr. A. Sheibani | |